Հաստատում եմ Ա.Խոնդկարյան
<< 15>. նոյեմբեր 2023թ

Նախագծային աշխատանքի պլան

Նախագծի ղեկավար՝ Անուշ Հայրապետյան

Թեմա՝ Հասարակագիտություն- Համայնքային հիմնախնդիրներ	
Նախագծի անվանում՝	Աղբի տեսակավորման մշակույթի բացակայությունը համայնքում
Առարկա(ներ)՝	հասարակագիտություն
Ուսումնական տարի, կիսամյակ՝	2022-2023թթ.
Դասարան՝	9-րդ
Տևողություն՝	☐ կարճաժամկետ ☒ միջնաժամկետ ☐ երկարաժամ
Նախագծի իրականացման փուլեր	6 փուլ
Վերջնաժամկետ՝	մայիսի 15
Տեսակը՝	☐ ներառարկայակ ☐ միջառարկայական ☒ վերառարկայական
Չնաչափը՝	☐ տեսական ☒ գործնական ☐ անհատական ☒ թիմային ☐ ընթացիկ ☐ ամփոփիչ

Նախագծի նպատակը՝

Ձևավորել աղբի կառավարման ,տեսակավորման մշակույթ համայնքում և նպաստել բնապահպանական հիմնախնդիրները գիտակցող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը

Զարգացնել հիմնախնդիրը հայտնաբերելու և դրանց լուծման ուղիները որոնելու հմտություններ նկարողություններ։

Ձևավորել կենսաբազմազանության վրա մարդու գործունեության վնասակար հետևանքները ճանաչելու, կանխելու և վերացնելու համարանհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ :

Ձևավորել հասարակական կյանքի տարբեր երևույթների հանդեպ հստակ դիրքորոշում ունեցող անհատի, խթանել քննադատական մտածողությունը, ինքնուրույն ճանաչողական գործունեության հմտությունները։

Զարգացնել աշակերտների սոցիալական հմտությունները, խթանել նախաձեռնողականությունը։

Նախագծի վերջնարդյունքները՝

ՀՊՁ

Աշակերտը կկարողանա՝

- ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ,
- գտնի և օգտագործի տեղեկույթի տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ։
- ներկայացնի և քննարկի համայնքի խնդիրներն ու բարելավման ուղիները
- վերլուծի ՀՀ արդի հիմնախնդիրները և մարտահրավերները տեղական ,տարածաշրջանային, գլոբալ համատեքստում, աչձագանքի դրանց որպես իրազեկ, պատասխանատու և հայրենասեր քաղաքացի։
- Գնահատի կայուն զարգացման ապահովման հնարավորությունները տարբեր ռեսուրսների կառավարման և պլանավորված օգտագործման միջոցով։

Հասարակագիտություն

- առաջարկի բնության և հասարակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր։
- ընտրի համայնքային հիմնախնդիրների լուծման առավել արդյունավետ տարբերակներ, առաջարկի համայնքային հիմնախնդիրների լուծման քայլեր։

Հետազոտության հիմնախնդիրը(մարտահրավերային հարցը)

Աղբի տեսակավորման մշակույթի բացակայությունը մեր համայնքում

Հետազոտության հիմնահարցեր

- Ո՞րն է ընտրված հիմնախնդրի կարևորությունն արդի աշխարհում։
- Ինչպես է կատարվում աղբահանությունը և ինչ հաճա;ականությամբ
- Ինչ դեր ունի հանրային իրազեկումը և կրթությունը աղբահանության բարելավման հարցում
- Ինչպես իրազեկումը կօգնի համայնքի աղբահանության խնդիրների լուծմանը
- Ինչ է աղբի տեսակավորումը
- Որքանով է մեր համայնքը պատրաստ աղբի տեսակավորման իրականացմանը
- Որոնք են հիմնախնդրի լուծման հնարավոր ուղիները

- Ի՞նչ անդառնալի հետևանքներ կարող է թողնել կլիմայի փոփոխությունը էկոհամակարգերում գոյություն ունեցող փոխազդեցությունների հավասարակշռվածության վրա։
- Ի՞նչ տարածվածություն ունի հիմնախնդիրը մեր երկրում , համայնքում։
- Հիմնահարցի առնչությամբ պետական ո՞ր կառույցներն են ներգրավված և պատասխանատու։
- Օրենսդրական ի՞նչ կարգավորումներ և լուծումներ կան (տեղական և միջազգային)։
- Դուք ի՞նչ կարող եք անել, առաջարկել։

Նախագծի նկարագիրը

Հիմնախնդրի շրջանակում դուք ուսումնասիրելու եք աղբի տեսակավորման մշակույթի բացակայությունը համայնքում՝ կատարելով հետազոտական աշխատանք, ուսումնասիրելով այդ հիմնախնդրին վերաբերող համապատասխան աղբյուրներ, իրականացնելով հարցումներ կամ կիրառելով հետազոտական այլ մեթոդներ։ Հարցազրույց վարելու համար անհրաժեշտ է ընտրել հարցազրույցի տեսակը և կազմել հարցեր։

Հետազոտության հիմնահարցերը կուղղորդեն ձեզ՝ հետազոտական աշխատանքը ճիշտ կազմակերպելու։ **Պարտադիր է գտնել բոլոր հիմնահարցերի պատասխանները։**

Ձեր հավաքագրած տվյալները պետք է վերլուծել, մշակել և կատարել եզրահանգում՝ դուրս բերելով և մատնանշելով աղբահանության ոչ ճիշտ կազմակերպման բացասական հետևանքները կլիմայի փոփոխության և կենսաբազմազանության վրա։ Պետք է դուրս բերել նաև, թե մեր համայնքում ինչպիսի տարածվածություն ունի այս հիմնախնդիրը, ինչպես նաև նախանշել այն ռազմավարությունները, որոնք կարող են իրականացվել այս խնդրի լուծման համար, այսինքն՝ հանդես գալ իրատեսական առաջարկներով։

Դուք պետք է որոշեք, թե կատարված հետազոտության արդյունքները ինչ ձևաչափով եք ներկայացնելու բոլոր շահագրգիռ կողմերին։

Առաջադրանքի կատարման համար ձևավորվելու է 3 խումբ, որտեղ ձեզանից յուրաքանչյուրը հնարավորություն կունենա ընտրելու այն դերը, որ ստանձնելու է նախագծային աշխատանքի ընթացքում։

Խմբերի ներսում դուք կարող եք ընտրել հետևյալ դերերը. այդ դերերից ամեն մեկն ունի իր պատասխանատվության և անելիքների շրջանակը։

1. նախագծի կառավարիչ
2. ժամանակի և աշխատանքների կառավարիչ
3. հաղորդակցության կառավարիչ
4. հետազոտության համակարգող
5. հանրային կապերի պատասխանատու
6. հարցեր կազմող
7. օպերատոր
8. մոդերատոր

Սովորողների ինքնուրույն հետազոտական գործունեություն

Փուլ I – Աշակերտների ձայնի և ընտրության իրավունք

Ուսուցիչը աշակերտներին ներկայացնում է նախագծի հիմնախնդիրը, հիմնահարցերը, բացատրում է, թե ինչ պետք է անեն այս նախագծի շրջանակում։ Քննարկում են, թե որքանով է այդ հիմնախնդիրը վավերական։ Ուսուցիչը ձևավորում է 4-հոգանոց խմբեր և աշակերտներին հնարավորություն տալիս խմբերում ընտրելու իրենց դերը՝ ըստ իրենց նախասիրության։ Յուրաքանչյուր խմբին տրվում է հստակ առաջադրանք։Խմբերը պատասխանատու են իրենց

առաջադրանքի կատարման համար։

Աշակերտները իրենց ընտրությունը գրառում են խմբեր, դերեր աղյուսակում։

Աշակերտական խմբերը որոշում են, թե նախագծի վերջնարդյունքը ինչ ձևաչափով են ներկայացնելու լսարանին, երբ արդեն պատրաստ կլինեն հետազոտության արդյունքները։ Վերջնական պրոդուկտը կարելի է ներկայացնել տեղեկատվական թերթիկի տեսքով, սահիկաշարով, տեսանյութով և այլ ձևերով, որ կառաջարկեն աշակերտական խմբերը։

Փուլ II –Հետազոտություն

Աշակերտները իրենց խմբերում որոշում են հետազոտություն անելու համար ինչ աղբյուրներից պետք է օգտվեն։ Նրանք կա՛մ ինքնուրույն աղբյուրներ են գտնում, կա՛մ դիմում են ուսուցչի աջակցությանը։ Ուսումնասիրում են տարբեր աղբյուրներ, հավաքագրում են տեղեկույթ, որի միջոցով կկարողանան դուրս բերել հիմնահարցերի պատասխանները։

Հետազոտության համար աշակերտները պետք է իրականացնեն հարցում, հարցազրույց, ուստի այս փուլում նրանք աշխատում են հետազոտական հարցեր կազմելու վրա, որոշում են հարցվողների թիրախային խմբերը։

Փուլ III - Տվյալների մշակում

Աշակերտները տարբեր աղբյուրներից հավաքած տեղեկույթը, փաստերը համադրում են, վերլուծում, մշակում։ Վերլուծում են հարցման և հարցազրույցից հավաքած տվյալները, դրանք ներկայացնում են գրաֆիկների ձևով կամ ազատ շարադրանքով։ Կարևոր է, որ նյութը գրելիս աշակերտները հղում անեն, թե ինչ աղբյուրներից են օգտվել,ուսուցիչն աջակցում և ուղղորդում է խմբերին գտնելու փաստական տեղեկատվության արժանահավատ աղբյուրներ։
Տարանջատելու տեղեկատվությունը ապատեղեկատվությունից։Դրսևորելու հաղորդակցման հմտություններ։

Փուլ IV – Անդրադարձ

Այս փուլում դասարանում կարող են տեղի ունենալ քննարկումներ արդեն հավաքագրած տվյալների շուրջ։ Աշակերտական խմբերի քննարկումները պետք է ուսուցչի համար տեսանելի դարձնեն այն, թե հետազոտության հիմնահարցերի պատասխանները որքանո՞վ են կարողացել գտնել։

Աշակերտները խորհրդատվական հանդիպում են ունենում ուսուցչի հետ՝ նրան ներկայացնելով իրենց կատարած նախնական աշխատանքը և ստանալով հետադարձ կապ ուսուցչից։

Փուլ V- Վերանայում

Ուսուցչի տրված հետադարձ կապից հետո խմբերը վերանայում են իրենց աշխատանքը, կատարում անհրաժեշտ փոփոխություններ և աշխատում վերջնական պրոդուկտ ստեղծելու ուղղությամբ։

Փուլ VI -Հանրային ներկայացում։

Դասարանում յուրաքանչյուր խումբ ունենում է 15 րոպե ժամանակ՝ իր աշխատանքի բովանդակությունը և պատրաստի պրոդուկտը դասընկերներին հետաքրքիր ձևաչափով, ստեղծագործաբար ներկայացնելու համար։

Խմբի բոլոր աշակերտները համառոտ ներկայացնում են, թե

- *որն է եղել նախագծի նպատակը,*
- *ինչ հիմնախնդիր պետք է լուծեին,*

- *ինչու է այդ հիմնախնդիրը կարևոր և արդիական իրենց համայնքի համար*
- *ինչ են արել նախագծային աշխատանքի ողջ ընթացքում այդ խնդրի պատճառները և բացասական հետևանքները իրենց համայնքում պարզելու համար,*
- *ինչ եզրահանգման են եկել և խնդրի լուծման համար ինչ առաջարկներ ունեն,*
- *որն է եղել խմբում յուրաքանչյուրի դերը և ներդրումը նախագիծն իրականացնելիս,*
- *ինչ չափով է արդյունավետ եղել թիմային համագործակցությունը*

Կարողություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում
☒ Սովորել սովորելու կարողունակություն ☐Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն ☐Տնտեսական կարողունակություն ☒ Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն ☒ Լեզվական գրագիտություն և կարողունակություն ☐Մշակութային կարողունակություն ☒ Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն ☒ Թվային և մեդիա կարողունակություն

Միջառարկայական կապեր		
☒ հայոց լեզու ☐ հայ գրականություն ☐հայոց պատմություն ☐ համաշխարհային պատմութ. ☒ հասարակագիտություն ☐օտար լեզուներ ☐ ռուսաց լեզու	☒ կենսաբանություն ☐ քիմիա ☐ ֆիզիկա ☒ աշխարհագրություն ☐ բնագիտություն ☒ մաթեմատիկա ☒ ինֆորմատիկա	☐ երաժշտություն ☐ կերպարվեստ ☐ բեմարվեստ ☐ պար ☐ մարմնակրթություն

Տարիքային խումբ			
☐ կրտսեր դպրոց	☒ միջին դպրոց	☐ ավագ դպրոց	☐ ավագ դպրոց

Նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ	
☒ տեսանյութ ☐ամսագիր, թերթ, պաստառ	☐ վեբ կայք ☒ սահիկաշար

☒ տեղեկատվական թերթիկ ☐ ձայնվածք (փոդքասթ)	☐ կոմիքս ☐ գրքի նկարազարդում

Հետազոտության աղբյուրներ

ՀՀ Սահմանադրություն /Հոդված 12/
ՀՀ օրեքը աղբահանության և սանիտարական մաքրման մասին / Հոդված 4,11, 43
Հասարակագիտության պետական չափորոշիչ
Օրենսդարական դրույթներ՝ ՀՀ կոշտ թափոնների կառավարման համակարգի ռազմավարություն 4.42
ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքը
ՀՀ օրենքը Աղբահանության և սանիտարական մաքրմանա մասին /հոդված4/Աղբահանության սանիտարական մաքրման հիմնական նպատակները և գործընթացի կազմակերպման սկզբունքներին:

www.arlis.am
www.arnap.am
www.e-draf
https://youtu.be/6tLgqCr1r4M,
https://aybschool.am/am/pageeproblem
https://www.mtad.am/departme
Nt-ptograms

Գնահատում

1. Հիմնախնդրի ներկայացում
2. Բնապահպանական ազդեցությունը բնության և մարդկանց վրա
3. Իրատեսական լուծումների նկարագիր և հիմնավորում
4. Հանրային ներկայացում
5. Համագործակցություն

Հաջողության չափանիշներ

Հիմնախնդրի ներկայացում

- դուրս բերել և ներկայացնել հիմնախնդրի պատճառները

Բնապահպանական ազդեցությունը բնության և մարդկանց վրա

- ցույց տալ հիմնախնդրի հետևանքները բնության և մարդկանց վրա համայնքում

Իրատեսական լուծումների նկարագիր և հիմնավորում

- առաջարկել խնդրի լուծման հնարավոր տարբերակներ
- հիմնավորել այդ լուծումների ընտրությունը

Հանրային ներկայացում

- հանդես գալ հանրային խոսքով
- ներկայացնել տեսանյութ/սահիկաշար

Համագործակցություն

- մասնակցել և ներդրում ունենալ թիմային աշխատանքներում
- կրել ստանձնած դերի պատասխանատվությունը

Թիմեր, դերեր

Խումբ	Թիմի անդամներ	Դերեր	Վերջնական արդյունք	Լրացնելու ժամկետ
1	Բալյան Անի	Նախագծի կառավարիչ	Վերահսկու, է նախագծի իրականացման ընթացքը	1-8-րդ շաբաթ
	Նազլուխանյան Մարգարիտա Նազլուխանյան Նարեկ Ադամյան Սվետա	օպերատոր օպերատոր օպերատոր	Որոնում են աղբյուները, որոնք վերաբերվում են աղբահանության ոլորտում հանրային քաղաքականությանը,պետական մարմինների իրավասություններին	2-4-րդ շաբաթ
2	Հակոբյան Լուսինե	հետազոտությունը համակարգող	Հետևում՝ հաղորդակցման կանոնների պահպանման՝	1-8-րդ շաբաթ

3			վարվեցողություն,քաղաքավարություն,պատշաճ դիմելաձև:	
	Գասպարյան Անի	ժամանակի և աշխատանքների կառավարիչ	Վերահսկում է աշխատանքի իրականացման ընթացքը	1-8-րդ շաբաթ
	Թորոսյան Գևորգ Մարգարյան Անգելինա	մոդերատոր մոդերատոր	Հետևում են կատարված աշխատանքին, հայտնաբերում են թերություններ	6-րդ շաբաթ
	Ավետիսյան Վլադիմիր Երիցյան Քրիստինե Լազյան Արմեն Գալստյան Անի	Հանրային կապերի պատասխանատու	Կազմում են և իրականացնում են հարցազրույցները	2-4-րդ շաբաթ